19999

Ն. Գ. ՄԻՆԱՍԵԱՆ

ՏԵՂԵԿԱԳԻՐ

ՀՈԳԱԲԱՐՁՈՒԹԵԱՆ ԱԶԳԱՑԻՆ ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ ՆՈՐ—ԶՈՒՂԱՅՈՒ

ՏՊԱԳՐԵԱԼ
ՀՐԱՄԱՆԱՒ Բ. ՍՐԲԱԶԱՆ Տ. ՄԱՂԱԲԻԱ ԵՊԻՍԿՈՊՈՍԻ ՏԷՐՈՒՆԵԱՆ
ԲԱՐԵԽՆԱՄ ԱՌԱՋՆՈՐԴԻ ԹԵՄԻՍ ՀԱՅՈՑ ՊԱՐՍԿ—ՀՆԴԿԱՍՏԱՆԻ

Ի ՆՈՐ—ԶՈՒՂԱ
Ի ՏՊԱՐԱՆԻ ԱՄԵՆԱՓՐԿՉԵԱՆ Ս. ՎԱՆԱՅ
1 8 9 9

372
Ա-23

372
Ա-23

ՏԵՂԵԿԱԳԻՐ

Յուլիս, 1899.

Մեր Ազգային երկսեռ Ուսումնարանների տեղեկագիրը ներկայացնելով Նոր—Զուղայի Պատուարժան Հասարակութեան, հարկ ենք համարում յայտնել, որ մեր երեքամեայ պաշտօնավարութեան օրով ի գործ ենք դրել ամէն կարելի եղած ջանքեր, նրանց բարեկարգ և յառաջադէմ վիճակի մէջ դնելու, չնայելով մեր հանդէպ եղած բազմադիմի դժուարութեանց ու խոչնդոտներին, ինչպէս որ կը տեսնուի հետևեալ տեղեկութիւններից։

Յայտնի է շատերին, որ մեր Ուսումնարանները նիւթական խիստ անձուկ վիճակի մէջ էին գտնվում, երբ մենք ստանձնեցինք Հոգաբարձութեան պաշտօնը. ուստի նկատելով, որ առանց նիւթական լայն միջոցներ ունենալու անհնար կլինի իրագործել մեր նպատակը, մեր գլխաւոր ուշադրութիւնը դարձրինք սոյն ամենակարևոր կէտի վերայ և մեր Ուսումնարանների այդ աննախանձելի դրութիւնը ըստ կարելւոյն բարւոքելու անմիջական քայլեր առինք։

Ըստ Անգղիական առածին թէ. «Բարեգործութիւնը տանից է սկսում», ամենից յառաջ Հանգանակութեան տումար շրջաբերեցինք Զուղայիս մէջ, տարեկան նուիրատու անդամներ գտնելու աշխատելով. և պէտք է խորին շնորհակալութիւն յայտնենք մեր Պատուարժան Հասարակութեան, որոնք ուսման յարգը ճանաչելով՝ ազգային պարտաճանաչութեան հոգւով չզլացան նիւթապէս քաջալերել զմեզ, Ուսումնարաններիս մշտնջենական նպաստ տուող անդամներ ստորագրուելու բարեյօժարութիւնը գործնականապէս ցոյց տալով։

Այս առաջին յաջողութիւնից քաջալերուելով՝ փութացինք գրաւոր դիմումներ անել Հնդկաստանի և Ջաւայի մէջ գտնուող մեր Ազգ. բարենպաստակ հաստատութեանց ու նշանաւոր ազգայնոց, որոնց մէջ առաջինն եղան Ռանգունայ ազգասէր Պարոնայք Բաղդասարեան եղբարք, որոնք փութացին մի հարիւր (100) ռուփեաց նպաստ յղել Ուսումնարաններիս, նոյնը ամենայն տարի շարունակաբար ուղարկելու ազնիւ խոստմամբ, որոնց հրապարակաւ յայտնում ենք մեր խորին շնորհակալութիւնը։

Դրանից անմիջապէս յետոյ ստացանք երկու հարիւր (200—) Ռուփւոյ նուէր Կալկաթայի Ս. Նազարէթայ և Զիչրու Եկեղեցեաց յարգելի Կառավարչութիւնից, որոնց ժամանակին նուիրելով մեր շնորհա-

2009

կալութիւնը, խնդրեցինք նրանցից աչքի յառաջ ունենալ մեր առաջին խնդրագիրը, որի մէջ երկարօրէն բացատրած լինելով մեր Ուսումնարանների ցաւալի վիճակը և մեր ունեցած նպատակները, այդ դրութիւնը բարւոքելու և ուսման ծաւալը ընդարձակելու մասին, տարեկան մի որոշ գումարի նպաստ էինք խնդրել. ուստի յիշեալ Պատ. Կառավարչութիւնը ի նկատի առնելով մեր այդ կարեւոր խնդիրքը, իրենց մի պաշտօնական ժողովի մէջ բարեհաճել էին տարեկան վեց հարիւր (600—) ռուփիոյ նպաստ որոշել Ուսումնարաններիս համար, որոնց մեր խորին շնորհակալութիւնը հրապարակաւ յայտնելու անհրաժեշտ պարտք ենք համարում:

Այստեղ չենք կարող ցաւօք սրտի չ'յիշել, որ հակառակ մեր ակնկալութեան՝ շատ քիչերն էին, որ ազգասիրաբար պատասխանեցին մեր գրաւոր դիմումներին. իսկ մեր տպած հարիւրաւոր յայտարարութիւնները յանուն կրթութեան մատաղ հայ մանկտւոյն, «Ձայն բարբառոյ յանապատի» մնալով՝ դժբաղդաբար չ'կարողացան արձագանք գտնել մեր հեռաբնակ յարգելի ազգայնոց սրտերուն մէջ: Բատաւիայի Ազգ. Հաստատութեանց Պատ. Վարչութիւնն ևս, որ միշտ համակրանօք է վերաբերուել դէպի մեր Ազգային Ուսումնարանները և որի վերայ դրուած էր մեր գլխաւոր յոյսը, չ'գիտենք ինչ նկատումներով այս անգամ չ'յօժարեցաւ օգնութեան ձեռք կարկառել մեզ, բայց սակայն մեծ յոյս ունենք, որ յիշեալ Պատ. Վարչութիւնը աչքի յառաջ ունենալով խնդրոյն կարեւորութիւնն և հանրային օգուտները միանգամայն, վերջապէս կը բարեհաճի կատարել մեր խնդիրքը, Ուսումնարաններիս տարեկան գումարի վերայ մի որոշ նպաստի յաւելացումով. որով գործնական մի նոր ապացոյց տալով այն ջերմ համակրութեան՝ որ միշտ տածել է դէպի սոյն Կրթական Հաստատութիւնները, և միևնոյն ժամանակ մեծ ույժ տալով մեր գործին, ոչ միայն երախտապարտ պիտի կացուցանէ զմեզ, այլ և մեր ապագայ երջանկութեան աղբիւր եղող մատաղ Սերնդին մշտնջենականապէս: (*)

(*) Ծանօթութիւն

Տեղեկագիրս մամուլին յանձնելու ժամանակ անսահման ուրախութեամբ սրտի՝ ստացանք յիշեալ Պատ. Վարչութեան 7 Օգոստ. թուակիր քաջալերական նամակը զեկուցանելով հոգաբարձութեանս իրենց Վարչական մասնաւոր մի ժողովի որոշմամբ երկսեռ Ուսումնարաններիս տարեկան նպաստագումարի վերայ (300) երեք հարիւր Գիլդըրի յաւելացման մասին (սկսեալ 1900. ից), որով երախտագիտական անկեղծ զգացումներով լցուած՝ կ'փութամք մեր խորին շնորհակալութիւնքը հրապարակաւ յայտնել Պատ. Վարչութեանը:

Ահա այսպէս ի դերև լինելով մեր յոյսերը մեր յարգելի Հնդկահայ եղբարց նկատմամբ կրթական ասպարէզին մէջ, իսկ միւս կողմից նկատելով, որ մեր Հայրենասէր և Բարեյիշատակ Նախնեաց կտակեալ գումարների տոկոսները, որոնք Ուսումնարաններիս մշտական եկամուտների աղբիւրներն են կազմում, ինչքան էլ որ համապատասխան լինէին այն ժամանակուայ համեստ պահանջներին, այսօր բոլորովին անբաւական են գտնուում, չորս հարիւր հոգուց աւելի աշակերտներ պարունակող մեր երկսեռ Ուսումնարանների անհրաժեշտ ծախքերին գոհացում տալու և հետևաբար չ'պիտի կարողանանք հասնել մեր նպատակին, առանց նոր եկամուտների աղբիւրներ ունենալու, պարտաւորուեցինք մեր ազգային (Տեղական) նեղ շրջանի մէջ նիւթական միջոցներ հայթայթելու աշխատել. ուստի ամենից յառաջ խնդրեցինք այժմեան Ատրպատականի Թեմի Առաջնորդ Գեր. Սահակ Եպիսկոպոս Այվատեանից, որ այն ժամանակ՝ Պարսկ—Հնդկաստանի վիճակի Փոխ—Առաջնորդութեան պաշտօնն էր վարում Թեհրանում, բարեհաճել Ջուղայից վիճակի գնացող քահանայից կողմից Ամենափրկչեան Ս. Վանքին վճարելի սովորական Աջհամբոյրի մի մասը Ուսումնարաններիս յատկացնելու տնօրէնութիւնն անել. շնորհակալութեամբ պէտք է խոստովանենք, որ Գեր. Փոխանորդ Հայրն իրաւացի և գործնական գտնելով մեր այդ թելադրութիւնը ի նպաստ կրթական գործին, բարեհաճեցաւ յիշեալ եկամտի 100ից 40ն Ուսումնարաններիս համար յատկացնելու օգտակար որոշումը անել, որի մի մասը արդէն ստացել ենք Առաջնորդական Խորհրդարանէն և կը յուսանք մեր Սրբազան Առաջնորդն ևս կ'բարեհաճի հաստատել այդ որոշումը, որով յիշեալ հասոյթը թէև նուազ, բայց և այնպէս Ուսումնարաններիս մշտական աղբիւրներից մէկը կարելի է համարել: (*)

Ազգային Թատրոնը, որ քանի տարիներէ ի վեր խափանուած էր, բաւական դժուարութեամբ կարողացանք վերականգնել և Սիրողաց խմբի աջակցութեամբ կամ Ուսուցիչների ոմանց ինքնուրոյն աշխատութեամբ, արդէն մի քանի ներկայացումներ տուել ենք ի նպաստ Ուսումնարաններիս: Թէպէտ և յիշեալ ներկայացումներից ձեռնեկեալ արդիւնքը աննշան մի բան կլինի, եթէ համեմատելու լինինք այն բոլոր դժուարութիւններին ու վհատեցուցիչ հանգամանքներին, որոնց են-

---

(*) Ծանօթութիւն

Նորին Սրբազնութիւնը վերջերս բարեհաճեց այդ որոշման հիման վերայ եկամուտի մի մասը տալ դպրոցի Վարչութեան.

թարկվում ենք մենք ամէն մի ներկայացում յաջողցնելու համար. սակայն կը յուսանք մօտ ապագայում աւելի արդիւնաւոր լինի, երբ մեր հասարակութիւնը գնահատելով ազգային թատրոնը և թատրոնի բարերար նշանակութիւնը ժողովրդի լուսաւորութեան գործում, աւելի սիրով կը յաճախէ թատրոնը, որով փոխադարձաբար կ'օգտուին մեր Ուսումնարանները նիւթապէս, իսկ ինքը հասարակութիւնը բարոյապէս: Ուստի հրապարակաւ յայտնելով մեր շնորհակալութիւնը սիրողաց խմբին, կը յուսանք թէ առանց վհատուելու սովորական արգելքների ու խոչնդոտների յառաջ, պիտի շարունակէ անձնուիրութեամբ և կանոնաւորապէս յառաջ տանել Ազգային Թատրոնի գործը, միշտ աչքի յառաջ ունենալով մեր Ուսումնարանների և հասարակութեան նիւթական ու բարոյական փոխադարձ շահերը միանգամայն:

Ի դէպս հարկ կը համարենք յիշել՝ թէ համոզուած լինելով, որ եթէ մի կանոնաւոր Երաժշտական խումբ գոյութիւն ունենայ Ջուղայիս մէջ, կարող է մեծ մասամբ նպաստել թատրոնի գործի յաջողութեան և յարատևութեանը, սիրողաց խմբի յարգելի անդամոց ոմանց աջակցութեամբ պէտք եղած գումարի մի մասը հանգանակուած և հարկաւոր նիւթեղէնների մասին պատուէր տրուած է արդէն: Միևնոյն ժամանակ խնդրել ենք մեր յարգելի բարեկամ Պարոն Հէլտզբրից, որ բարեհաճի վիօլինի վերայ սովորեցնել Եւրոպական երաժշտութեան եղանակները մի քանի կամաւոր բարեկամների, որն որ սիրով յանձն առնելով, արդէն մի քանի ամիսներէ ի վեր շարունակում է սովորեցնել Կեդր. Դպրոցում շաբաթն երկու անգամ, որով պարտք ենք համարում մեր խորին շնորհակալութիւնը հրապարակաւ յայտնել մեր յարգելի բարեկամին՝ իւր նեղութեանց համար. և յաջողութիւն մաղթել փոքրաթիւ ուսանողներին, յուսալով որ ուրիշ բարեկամներ ևս բարի նախանձով կը հետևեն նրանց օրինակին:

Քաջ համոզուած լինելով, որ մեր Հոգևորականք կարող են գործել յօգուտ իրենց ժողովրդեան եթէ Կամք ունենան, վստահութիւն ունեցանք խնդրելու Կալկաթայի վիճակաւոր Արժ. Քահանաներից, ազգասիրաբար մասնակցել այնտեղի տերութեան այգում տեղի ունեցող Ֆանտիֆէյը կոչուած տարեկան ընդհանուր վիճակահանութեան, ի նպաստ Ուսումնարաններիս մէջ ուսանող որբ աշակերտաց, որոնք իրենց նուիրական կոչման համաձայն չ'զլացան անմիջապէս ձեռնարկել բարի գործին և անցեալ երկու տարուան հասոյթը արդէն ուղարկել են մեզ ժամանակին. իսկ ներկայ տարւոյս մէջ դեռ չ'գիտենք մինչ ինչ աստիճան յաջողութիւն են ունեցել: Ուստի պարտք ենք համարում մեր շնորհակալութիւնը հրապարակաւ յայտնել յիշեալ Արժ. Քահանայից,

իրենց կրած նեղութեան համար, յուսալով, որ թէ նրանք և թէ նրանց Արժ. յաջորդները չ'պիտի խնայեն իրենց ձեռքէն եկած ջանքերը, ապագայում աւելի արդիւնաւոր դարձնելու սոյն բարենպատակ և ազգօգուտ ձեռնարկը: Այստեղ չ'պիտի մոռանանք մեր մասնաւոր շնորհակալութիւնը յայտնել Արժ. Տէր Պսակ Հ. Յակովբջանեանցին, որ յարգելով մեր խնդիրքը՝ բարեհաճեց Ուսումնարաններիս համար Անգղիերէն և Պարսկերէն յարմար դասագրքեր ձրիապէս ձեռք բերելու գովելի աշխատութիւնը յանձն առնել ազգասիրաբար. նաև խորին շնորհակալութիւն ենք յայտնում ազգասէր նուիրատուին:

Ի նկատի ունենալով այն իրողութիւնը, որ եթէ Կեդր. Գրավաճառանոցը ճոխ ու ծաղկած վիճակի մէջ լինի, օգտակար կարող է լինել մեր Ուսումնարաններին և հասարակութեանը թէ նիւթական և թէ բարոյական տեսակէտից, արդէն պատուէր ենք տուած, որ Եւրոպայէն մի որոշ քանակութեամբ վաճառելի թղթեր և այլ պարագայք ուղարկուեն մեզ վաճառելու համար, որոնք կը յուսանք, թէ պիտանի կարող են լինել թէ Դպրոցներում, թէ առանձին տներում և թէ զանազան առևտրական ճիւղերում գործածութեան համար: Մտադիր ենք նաև Ռուսաստանէն բերել տալ վերջերս լոյս տեսած ազգային նշանաւոր հեղինակների պիտանի գրքերից և թարգմանութիւններից, զորս վաճառելու աշխատելով՝ կը յուսանք թէ հաւասարապէս շահեցրած կ'լինենք մեր Ուսումնարանները նիւթապէս և հասարակութիւնը—բարոյապէս:

Մինչդեռ իրերի այս կացութեան մէջ մերթ քաջալերը և մերթ յուսահատ կը տքնէինք նորանոր եկամուտների նուազ աղբիւրներ գտնելու և մեր բազմաթիւ ուսումնածարաւ մանկանց համար մըտաւոր պաշար պատրաստելու, ահա իբրև աւետաբեր հրեշտակ վրայ հասաւ մեր Նորընտիր Սրբազան Առաջնորդն և ի մեծ խրախոյս մեր լքեալ սրտերուն ուրախութեամբ յայտնեց, թէ ազգիս Վեհափառ Հայրապետի հրամանաւ Նորին Սրբազնութիւնն Էջմիածնէն Դաւրէժ երթալով և Հանգ. Խաչատուր Վարդապետ Կարապետեանի այնտեղ թողած գումարը (մօտաւորապէս 3,000 թուման) գանձելով, ապահովացրած է Մեծ. Եղբ. Թումանեանց Թէհրանի առևտրական տան մէջ տարէն 100 ին 12 տոկոսով: Ուստի երախտագիտական և որդիական պարտք ենք համարում մեր սրտազեղ անբաւ շնորհակալութիւնը հրապարակաւ յայտնել Նորին Վեհափառութեան՝ իւր բարեհաճ տնօրինութեան համար, մեր Սրբազան Առաջնորդ Հօրը՝ իւր կրած նեղութեան համար, և ազգիս պարծանք եղող Թումանեանց մեծահամբաւ տանը՝ իրենց ճշմարիտ ազգասիրութեան ու մասնաւոր զոհաբերութեան համար:

Զիգան գիւղը, որ քանի տարիներէ ի վեր Կեդր. Դպրոցի սեփականութիւն և նրա հաստատուն եկամուտների աղբիւրներից մէկն է համարվում, դժբախտաբար վերջին 4—5 տարիների մէջ նրա մասին ծագած երկարատև ու զզուելի վէճը նիւթական մեծ վնասներ է պատճառել Ուսումնարաններիս և ժամանակի կորուստ Հոգաբարձութեանս. ուստի տեսնելով, որ եթէ ուզենք մեր ամբողջ ժամանակը զոհել այդ կնճռոտ գործի համար և դատ վարել ոսոխի դէմ ու տարիներով դեգերել Կառավարութեան դրան թէ այստեղ և թէ Թէհրանում, Ուսումնարաններիս ներքին գործերը՝ կրթական տեսակէտից մանաւանդ երեսի վրայ պիտի մնան, խնդրեցինք Սրբազան Առաջնորդ Հօրից, իրեն յարմար դատած եղանակաւ ընտրել տալ մի Յանձնախումբ թէ գիւղը կառավարելու և թէ նրա դատը պաշտպանելու Ֆառաջօլլահ լօռի դէմ. ուստի թաղական ժողովով ընտրած պատգամաւորների մի ժողովի մէջ, որ մօտ անցեալում տեղի ունեցաւ Առաջնորդարանում ընդ նախագահութեամբ Ս. Առաջնորդին, ընտրուեց մի Յանձնախումբ, բաղկացեալ հետևեալ հինգ յարգելի անձնաւորութիւններից։

Արժ. Սրբ. Տէր Իսահակ Թ. Ամբարչեանց,
Գերաստիճան Մկրտիչ խան Յ. Խ. Դաւիթխանեանց,
Մեծ. Պարոն Մկրտում Յ. Աբգարեանց,
,, ,, Մկրտիչ Զ. Մարտիրոսեանց,
,, ,, Յովսէփ Կարապետեան

որոնք Նորին Սրբազնութեան առաջարկութեամբ և ժողովականների վերջաւորութեամբ խոստանալով առ այժմ տարեկան առ նուազն մի հարիւր թումման իբրև զուտ եկամուտ տալ Կեդր. Դպրոցին արտաքոյ ծախքերից. հարկ եղած քայլերը առել են արդէն և բանակցութեան մէջ են գտնվում տեղական իշխանութեան և Ֆառաջօլլահ լօռի հետ, կը յուսանք, թէ իրենց խոհեմ ջանքերով ու լուրջ գործունէութեամբ կը յաջողեն լիշեալ գիւղը Նորից Դպրոցի անբռնաբարելի սեփականութիւն դարձնելով՝ ազատ կացուցանել մեր Ուսումնարանները այն արտաքոյ կարգի ծախքերից ու վնասներից, որոնց անընդհատ ենթարկուած են եղել անցեալ քանի տարիների ընթացքում. և ահա այդ ժամանակն է միայն, որ կարող կը լինենք Զիգան գիւղը ուսումնարաններիս հաստատուն եկամուտների աղբիւրներից մէկը համարել։

Աւելորդ չենք համարում յիշել աստ, որ չնայելով մեր նիւթական նեղ հանգամանքներին, մեր երեքամեայ պաշտօնավարութեան օրով երկսեռ Ուսումնարաններիս շէնքերի մէջ զանազան կարևոր փոփոխութիւններ և անհրաժեշտ նորոգութիւններ անելու հարկադրուած

ենք եղել, մանաւանդ Օրիորդաց Դպրոցում տեղի նեղութեան պատճառաւ։ Սակայն դիտել պէտք է, որ Կեդր. Դպրոցը դեռ բաւական նորոգութեան պէտք ունի և կը յուսանք, թէ շուտով կարող պիտի լինենք այդ պակասը լրացնելու, երբ նիւթական աւելի նպաստաւոր հանգամանքների մէջ լինենք։

Իբրև մի անուրանալի ճշմարտութիւն՝ յայտնի է ամենին, որ մեր այժմեան Օրիորդաց Դպրոցը իւր միջնադարեան շէնքի անյարմարութեան պատճառաւ բոլորովին անտանելի է դարձած, և առողջապահական օրինաց համաձայն մի նոր ու ընդարձակ Դպրոցի պէտքը վաղուց արդէն զգալի էր համարուած Զուղայի մէջ։ Մինչդեռ այդ ամենակարևոր պէտքը լրացնելու յարմար առթի էինք սպասում ամենայն անհամբերութեամբ, մեր Սրբազան Առաջնորդ Հայրն երբ առաջին անգամ այցելեց լիշեալ օրիորդաց Դպրոցը և տխուր տպաւորութեան ներքոյ դուրս ելաւ այնտեղից, որպէս թէ օդախեղդ բանտի մէջ այցելած լինէր, իւր հովուական խնամոց յանձնուած բանաւոր հօտի փափկասեռ անմեղ մանկտոյն արդէն այդ բոպէից մեր յոյսը իրականութիւն ստանալով՝ այլ ևս առանց երկմտելու հրաւիրեցինք Նորին Սրբազնութեան լուրջ և անմիջական ուշադրութիւնը այդ կենսական խնդրոյ վերայ. և ինչքան մեծ եղաւ մեր ուրախութիւնը, երբ լսեցինք թէ նոյն ինքն Սրբազան Առաջնորդը արդէն այդ բարի միտքը յղացել էր ինքնաբերաբար... և ահա հազիւ թէ մի քանի ամիս անցած այդ երջանիկ օրից, այսօր Զուղայի Կեդրոնական թաղի մէջ բարձրացած ենք տեսնում մի հոյակապ շէնք, որը կը յուսանք շուտով իւր լրմանը կը հասնէ շնորհիւ Նորին Սրբազնութեան գովելի ջանասիրութեան և մեր յարգելի հաստակութեան առատ նուիրատուութեան։ (*) Միևնոյն ժամանակ Հոգաբարձութիւնս աչքի յառաջ ունենալով սոյն հոյակապ շէնքը իւր կատարմանը հասցնելու համար պէտք եղած գումարի պակասութիւնը և այդ նոր դպրոցի համար մի համեստ դրամագլուխ կազմելու անհրաժեշտութիւնը, խնդրեցինք Նորին Սրբազնութիւնից՝ որ բարեհաճի անմիջապէս հանգանակութիւն բանալ Հնդկաստանում և Զաւայում եղող մեր յարգելի ազգայինների մէջ, յուսալով թէ այս անգամ չ՝պիտի խը-

---

(*) Ծանօթ.

Պ. Մարտիրոս Ս. Տէր Ոսկանեանցը ազգասիրաբար յանձն է առել շինութեան գործի ընդհանուր վերահսկողութեան ծանր և պատասխանատու պաշտօնը, իրեն հետ օգնական և խորհրդակից ունենալով Պ. Յովհաննէս Բամբանեանցը, որոնց անձնուիրութիւնը արդարև արժանի է գովութեան և շնորհակալութեան։

նայեն օգնել կրթական տաճարի շինութեան ս. գործին. ուստի Նորին Սրբազնութիւնն ևս որ բարեդիպօրէն Ամենափրկչեան ս. Վանուց մէջ մի Հոգևոր Դպրանոց բանալու գովելի մտադրութիւնը և այդ առթիւ հանգանակութիւն բանալու առաջադրութիւնն ունէր, բարեհաճեց յատուկ կոնդակաւ նուիրակ կարգել Սրժ. Տէր Պօղոս Հ. Յակովբջանեանցին, լիշեալ երկու բարենպատակ և հանրօգուտ ձեռնարկների առթիւ ի միասին հանգանակութիւն կատարելու համար։ Յիշեալ Սրժ. նուիրակն արդէն ուրիշ շատ դէպքերում ճշմարիտ ազգասիրութեան և մանաւանդ կրթասիրութեան ապացոյցներ տուած լինելով, տարակոյս չունինք, որ այս նուիրական գործին մէջ ևս կարդարացնէ մեր յոյսերը, որով կը յուսանք Աստուծոյ յաջողութեամբ մօտ ապագայում ունենալ մի գեղեցիկ ու բարեկարգ օրիորդաց ուսումնարան իւր յատուկ դրամագլխով, որպէս և մի կանոնաւոր Հոգևոր Դպրանոց, որոնք պիտի կարողանան ընծայել մեզ ապագայ բարեկիրթ մայրեր և ընտիր ու արժանաւոր Հոգևորականներ, ի պարծանս ազգի և ի պայծառութիւն եկեղեցւոյ։

Նկատելով որ Ձեռարհեստը նոյնքան պիտանութիւն և կարևորութիւն ունի մեր օրիորդների համար որքան և ուսումը, մեր պաշտօնավարութեան օրով չենք խնայել ի գործ դնել ամէն կարելի եղած ջանքեր, Ձեռարհեստի ուսումը ծաղկեցնելու օրիորդաց Դպրոցում. մանաւանդ վերջերս յատուկ ուշադրութիւն ենք դարձրել կար ու ձևի վերայ, պէտք եղած նիւթերը Դպրոցից մատակարարելով ուսանող աշակերտուհիներին. և հարթակարութիւնը՝ որի վերայ գաղափար չունէին մեր օրիորդները, արդէն սկսել է իւր յատուկ տեղը բռնել Ձեռարհեստի մէջ։ Անշուշտ Ձեռարհեստն ընդհանրապէս կարող է աւելի փայլ ստանալ և յառաջադիմել, եթէ սովորող աշակերտուհեաց ծնողներից կարողներն չխնայեն պէտք եղած նիւթերը մատակարարել իրենց զաւակաց։

Օրիորդաց Դպրոցի մասին խօսելով, պարտք ենք համարում մեր անկեղծ շնորհակալութեան հաւաստիքը յայտնել Զուղայի «Որբուհեաց Խնամակալութեան» Պատ. մասնախմբին, որ ձրիապէս զգեստ և դպրոցական պիտոյքներ է մատակարարում այս դպրոցում ուսանող որբ ու աղքատ աշակերտուհիներին։

Աւելորդ չենք համարում յիշել աստ, որ մտադիր ենք եթէ Տէրն յաջողի, քիչ ժամանակից յետոյ մի քանի որդեգիր աշակերտներ պահել Կեդր. Դպրոցում, յուսալով թէ կը գտնուին մեր Հասարակութեան մէջ այնպիսի բարերար անձինք, որոնք մարդասիրաբար կը բարեհաճին իրենց սեպհական ծախքով մի կամ աւելի սաներ պահել Զուղայի կամ շրջակայ գաւառների որբ երեխաներից։

Սահմանափակելով ուսումնարաններիս նիւթականին վերաբերեալ տեղեկագրութեան մասը, այսպէս կեզրակացնենք մեր խօսքը, որ մեր նախորդ Հոգաբարձութեան օրով մեր ուսումնարանների բիւդճէն առ առաւելն տարեկան 1,300—1,400 թուումանից չէր բարձրանում. այժմ հասել է մօտ 1,800 թուումանի. իսկ մեր նոր ծրագրի համեմատ առաջիկայ մէկ տարուայ համար 1,900—2,000 թուումանից պակաս չէ կարող լինել։ Թերևս այս զգալի տարբերութիւնը մի տարօրինակ երևոյթ կը թուի ոմանց մեր հասարակութեան մէջ, և գուցէ կը գտնուին այնպիսիներն ևս, որոնք այս ծախուց առաւելութիւնը կը վերագրեն մեր շռայլութեան. ի հարկէ այդպիսիների աշխարահայեցողութիւնը խիստ սահմանափակ լինելով, կարծում են թէ հին դարերի մէջ ենք ապրում դեռ. ուստի և դրութիւնը միշտ պէտք է մնայ նոյնը, բայց մենք որ աչքի յառաջ ունենք մեր ուսումնարանների դիրքի բարձրացումն և ուսման առարկաների յաւելացումը մի կողմից, իսկ ուսուցիչների պատասխանատու պաշտօնը և նրանց կեանքի անհրաժեշտ պայմանները միւս կողմից, բարեխղճութիւն չէր լինել մեր կողմից, եթէ չուզէինք կամ չուզենք կարելի եղածին չափ քաջալերել նրանց՝ ռոճկի յաւելացումով, մանաւանդ երբ ի նկատի առնելու լինենք ներկայ ժամանակիս կենսական պիտոյից արժէքների անհամեմատ բարձրութիւնը։ Ի հարկէ մենք չենք կարող հետևել ոմանց այն արտառոց գաղափարին թէ «պէտք է ուսուցիչներին միշտ քաղցած պահել, որպէս զի ըմբոստ չ'լինեն իրենց մեծաւորի դէմ, պէտք է քիչ վճարել սրանց և շատ պահանջել նրանցից, և.» ընդ հակառակն, մեր համոզումն սա է եղած միշտ, թէ պէտք է ըստ կարելւոյն աշխատել գոհացումն տալու ուսուցչին և նրա արդարացի պահանջներին, երբ արժանաւոր ու ընդունակ մէկն է նա, և որից պէտք է սպասել մատաղ սերնդի ընտիր ու հարազատ դաստիարակութիւնը։ Ահա հէնց այդ սկզբունքով աշխատելենք և պիտի աշխատենք մեր կարողութեան չափով նոր եկամուտներ ստեղծել ուսումնարաններիս բազմակողմանի պէտքերը լրացնելու, հաճաձայն ժամանակի անհրաժեշտ պահանջմունքներին։

ԿՐԹԱԿԱՆ ՎԻՃԱԿ

Ճշմարտութիւնը խոստովանած լինելու համար պէտք է ասած որ մեր՝ Հոգաբարձութեան պաշտօնը ստանձնելու ժամանակ ուսումնարաններիս կրթական վիճակն այնչափ աննախանձելի էր՝ որչափ նիւթականը. և մինչդեռ մեր ամբողջ ժամանակը նուիրել ու մեր ուշադրութիւնը կեդրոնացրել էինք նիւթական վիճակը բարւոքելու համար, կրթական գործը յանձնեցինք այն ժամանակուայ տեսչի հսկողութեանը, անշուշտ հրաւիրելով թէ նրա և թէ ուսուցիչների լուրջ ուշադրութիւնը տխուր իրողութեան վերայ, յուսալով որ կարճ ժամանակամիջոցում յառաջադիմութեան նշաններ յերևան կը գային. սակայն երբ տարեկան քննութիւնը անձամբ կատարեցինք, արդիւնքը մեր ակնկալութեան համեմատ չեղաւ, մանաւանդ տղայոց դպրոցինը: Սոյն երևոյթը վերագրելով ուսուցիչների ոմանց ապիկարութեանը, հարկ համարեցինք մի քանի փոփոխութիւններ անել ուսուցչական խմբի մէջ, ոմանց ևս մէկ դպրոցից միւսը փոխադրեցինք ըստ յարմարութեան. և այս անգամ աւելի որոշ ու դրական կերպով հասկացնելով ուսուցիչներին իրենց կոչումը և ունեցած սրբազան պարականութիւնն ու բարոյական պատասխանատուութիւնը իրենց նուիրական պաշտօնի մէջ, տղայոց և օրիորդաց ուսումնարանները մրցման աստիճանի մէջ դնելը օգտակար համարեցինք, իրաւունք տալով ուսուցիչներին քառամսեայ քննութիւնները փոփոխակի կերպով կատարելու տեսչի հսկողութեան ներքոյ. իսկ մենք տարեկան քննութիւնները անձամբ կատարելով, դրժբաղդաբար շատ քիչ տարբերութիւն կարողացանք նկատել նախորդ տարւանից. բայց և այնպէս այն համոզումն գոյացրինք՝ թէ յոյներս միայն ուսուցիչների բարեխղճութեան վերայ դնելով չպէտք է բաւականանալ, այլ թէ կրթութեան ղեկը և թէ տեսչութեան պաշտօնը ուղղակի մեր ձեռքը առնելով. բայց մեզնից անկախ պատճառներով տարեշրջանի սկզբում չը կարողացանք այդ գործնական քայլը առնել մինչ տարւոյս միջոցում, երբ նախկին տեսուչ Սրժ. Տէր Վարդան Ս. Վարդանեանցը հրաժարուեց տեսչութեան պաշտօնից՝ Բատաւիայի վիճակը երթալու համար, և հարկ եղաւ ուսուցիչների մէջ փոփոխութիւններ անել. տեսչական կարևոր պաշտօնը յանձնուեցաւ Հոգաբարձութեանս անդամ Պարոն Մարտիրոս Ս. Յարութիւնեանցին, որի առաջին գործն եղաւ միջոցներ ձեռք առնել ուսումնարաններս խիստ կարգապահութեան ներքոյ դնելու և անմիջապէս ձեռնարկեց նոր ծրագրի

և ուսման հրահանգի մշակմանը առաջիկայ 2 տարուան համար, զոր արդէն վերջացրած և Նորին Սրբազնութեան ու Հոգաբարձութեանս հաւանութիւնը ստացած է զայն գործադրելու համար: Յիշեալ ծրագիրը ուշադրութեամբ քննած լինելով, վստահօրէն կարողանում ենք ասել, որ եթէ ճշդիւ գործադրուի առանց արտաքին արգելքների հանդիպելու, մեր ուսումնարանները բաւական յառաջադէմ վիճակի մէջ կարելի է տեսնել երկրորդ տարեշրջանի վերջում:

Պարոն տեսուչն ձրիաբար յանձն է առել օրական Մաթեմատիկայի դասերը աւանդել Կեդր. Դպրոցի Զ. Դասարանի աշակերտներին, որի համար նա զոհում է իւր ազատ ժամերը. և այսպէսով պատեհութիւն է ունենում անձամբ դիտել ու վերահասու լինել ուսումնարանների առօրեայ ներքին ընթացիկ գործերին:

Նկատելով որ աշակերտներից մեծ մասը ի զուր են վատնում իրենց ժամանակը փողոցներում շրջելով, առաւօտեան և երեկոյեան սերտողութեան սիստեմը անհրաժեշտ կերպով մտցրինք ուսումնարաններիս մէջ, հերթապահ ուսուցիչների հսկողութեան ներքոյ: Բայց առաջիկայ ուսումնական տարուան մէջ Կեդր. Դպրոցի ներքին կարգապահութեան և աշակերտաց հսկողութեան պաշտօնը յանձնուելու է ուսուցիչ Պարոն Գալուստ Բարսեղեանցին իսկ օրիորդաց բաժնում Պարոն Վ. Տէր Վարդանեանին:

Ըստ որում փորձով գիտենք և խորապէս համոզուած ենք թէ ուսումնարանների իրական յառաջադիմութիւնը գլխաւորաբար կախումն ունի ներքին խիստ կարգապահութիւնից (դիսիպլին), և որի բացակայութեամբ անգործադրելի, եթէ չասենք բոլորովին մեռած տառ պիտի մնայ ուսման հրահանգը, ինչքան էլ որ խնամքով և տեղական հանգամանքներին համապատասխան պատրաստուած լինի, պիտի աշխատենք այսուհետ ամուր կերպով պահպանել կարգապահութեան օրինաւոր ղեկը մեր ձեռքում: Բայց ցաւալին այն է՝ որ ոմանք ծնողներից գաղափար չունենալով ուսումնարանի կարգապահութեան վերայ կամ թէ անհոգութեամբ զանցառութեան տալով այդ ամենակարևոր կէտը, ոչ թէ միայն իրենց զաւակաց վարք ու բարքի ցաւալի զեղծման, այլ և ուսումնարաններիս ներքին բարեկարգութեան խանգարման պատճառ են լինում և միևնոյն ժամանակն իրենց զաւակաց պախարակելի և անուղղելի վարքը վերագրում են ուսուցիչների թուլութեանը, որ չեն կարողանում իշխել իրենց զաւակաց կամքի և մտաւոր ու հոգեկան վիճակի վերայ իրենց տներում գտնուած ժամանակն անգամ . . . :

Ներկայում գպրոցը բաղկացած է հինգ դասարաններից, երկու նախակրթարաններից և մեկ պատրաստականից։ Նոր ծրագրի համեմատ առաջիկայ տարում մեր երկսեռ ուսումնարաններում կունենանք վեցերորդ, իսկ հետևեալ տարում եւթներորդ դասարան. առաջինը տեղական քննիչներով և երկրորդը արտասահմանից եկող հարցերով պիտի քննուեն. այնպէս որ՝ վերջին դասարանում աւարտող աշակերտն (Կեդր. Դպրոցի) ունենալով իւր ձեռքում Հոգաբարձութեան վկայագիրը, կարող պիտի լինի մտնել կեանքի ասպարէզի մէջ և առանց դժուարութիւն զգալու՝ գոհացուցիչ կերպով պաշտօն վարել որ և է հաստատութեան մէջ. և ի դէպս եթէ ուզեն Հնդկաստան երթալ բարձրագոյն ուսումն ստանալու համար, թերևս դիւրութեամբ կարող պիտի լինեն ընդունուիլ Հայոց Մարդասիրական Ճեմարանում, քանի որ ներկայ ծրագիրը համաձայն կը գտնուի իրենց ներքին կանոնադրութեան։ Բայց անշուշտ այդ պարագայում ծնողքն պէտք է մասնաւոր փոյթ տանեն իրենց զաւակաց կանոնաւոր կրթութեանը Սզգ. Դպրոցում, վերը յիշուած պայմաններով։ Հակառակ պարագայում թերուս աշակերտները չունենալով Հոգաբարձութեան վկայագիրը իրենց ձեռքում, թերևս չեն կարող ընդունուիլ յիշեալ Ճեմարանում, քանի որ Կալկաթայի Հայոց եկեղեցւոյ կառավարչութիւնը բնաւ չէ յօժարում օգնութեան ձեռք կարկառել կամ որ և է դիւրութեան միջոցներ ընձեռել այդպիսիներին, ինչպէս որ արդէն ժամանակին մի պաշտօնական յայտարարութեամբ ծանօթացրել ենք մեր հասարակութեանը սոյն իրողութեան հետ։

Գալով Օրիորդաց Դպրոցին, այս տարի արտասահմանից մի հմուտ և բարեկիրթ վարժուհու կարիքը խիստ զգալի եղաւ, որի համար ամիսներէ ի վեր է բանակցութեան մէջ ենք մտած այլ և այլ տեղերի և անձանց հետ. և կը յուսանք թէ՝ ի վերջոյ կը յաջողինք մեր ակնկալեալ բարեկիրթ վարժուհին ձեռք բերել, չ'նայելով այն բոլոր դժուարութիւններին՝ որոնց մէջ ենք գտնվում քաղաքիս հեռաւորութեան և այլ աննպաստ հանգամանքների պատճառաւ։

Ի տեղեկութիւն մեր յարգելի հասարակութեան կը յայտնենք որ ի նկատի ունենալով Դաղղիերէն համատարած լեզուի պիտանութիւնը և օգտակարութիւնը Պարսկաստանի մէջ ինչպէս և օտար երկիրներում, հարկ համարեցինք մացնել մեր ծրագրի մէջ և ներկայ տարեշրջանից սկսուելու է (հինգերորդ դասարանից) այդ լեզուի դասախօսութիւնը տղայոց Դպրոցում։

Գեղարուեստի ճաշակը մեր աշակերտների մէջ մացնելու նպատակաւ, քանի ամիսներէ ի վեր նկարչութիւնը իբրև կամաւոր առարկայ դասախօսուում է Կեդր. Դպրոցում, արտաքոյ դպրոցական վեց դասերից. կը յուսանք թէ այս արհեստն ևս հետզհետէ ծաղկելով, կարող է մի օր օգտակար լինել ուշադրութեամբ ուսանողներին։

Մեր վերջին քննութիւնները կատարուեցան ի ներկայութեան Սրբազան Առաջնորդ Հօր։ Զնայելով մեր տուած դժուար հարցերին, որի համար վկայեցին Նորին Սրբազնութիւնն և անկողմնակալ քննիչները, արդիւնքը ընդհանուր առմամբ գոհացուցիչ է, ի բաց առեալ մաթեմատիկան, որի մէջ թոյլ էին գտնվում երկսեռ աշակերտներն ընդհանրապէս։

Իբրև եզրակացութիւն կարող ենք ասել, որ վերջին քանի ամիսների մէջ կատարուած փոփոխութեանց և խիստ կանոնապահութեանց արդիւնքը այժմէն իսկ զգալի եղաւ, որով լիայոյս ենք թէ պիտի յաջողինք առաջիկայ ուսումնական տարեշրջանի մէջ աւելի արդիւնաւոր դարձնել ուսումնարաններիս մէջ աւանդուած ուսմունքը նոր ծրագրի իրագործմամբ։

Այս տեղեկութիւնները հաղորդելով մեր յարգելի հասարակութեան, բնաւ նպատակ չենք ունեցել համեստութեան հակառակ գործել և փող հարկանել մեր այն չնչին և աննշան ծառայութեան համար, որ արել ենք ազգին մեր սեպուհ պարտականութեան համաձայն, այլ այսչափն միայն յայտնել, որ մեր տկար կարողութեան չափով գործել ենք և պատրաստ ենք գործելու մեր նեղ շրջանի մէջ և ամենանպաստ հանգամանքների ներքոյ անգամ։ Միևնոյն ժամանակ ակնկալում ենք մեր յարգելի հասարակութիւնն ևս քիչ թէ շատ համակրանօք վերաբերուի դէպի այս կրթական տաճարները, և փոխանակ շարունակ հալածելու մեզ և ամէն մի քայլափոխում խծբծելու մեր գործառնութիւնքն ու վհատեցուցիչ խօսքերով պաղեցնելու մեր գործելու եռանդը (ողջամիտ մեծամասնութեան համակրանքը շնորհակալութեամբ յարգում ենք), մեզ քաջալերելու և ի հարկին աջակցելու չափ բարի դտնուի, միշտ և յամենայն դէպս աչքի յառաջ ունենալով իւր իսկ կենսական շահերը թէ բարոյական և թէ նիւթական տեսակէտից։

Վերջացնելով մեր խօսքը՝ որդիական պարտաճանաչութեամբ և երախտագիտական հոգւով նուիրում ենք մեր խորին շնորհակալութիւնը մեր Սրբազան Առաջնորդ՝ Տ. Մաղաքիա Եպիսկոպոսին, որ իւր այստեղ ժամանելու օրէն ի վեր սատար է կանգնել Հոգաբարձութեանս և իւր Հայրական քաջալեր ու յորդորական խօսքերով և բարի խորհուրդներով քաջալերել է մեզ ի գործունէութիւն, և մեր արած բոլոր օգտակար համարուած որոշումներն ու ձեռնարկները միշտ արժանացել են Նորին Սրբազնութեան բարեհաճ հաւանութեան։

Շնորհակալութիւն ենք յայտնում մեր յարգելի ուսուցիչներին ընդհանրապէս, որ յօժարամիտ են գտնվում բարեխղճութեամբ ծառայելու կրթական ասպարիզի մէջ, և մասնաւորապէս Պ. Մկրտում Կարապետեանին, որ արտաքոյ իւր դպրոցական պաշտօնից՝ կատարեալ եռանդով և գովելի ջանասիրութեամբ աջակցում է թատերական գործին։ Նաև մեր մասնաւոր շնորհակալութիւնը նուիրում ենք Շնորհ. Դպիր Մկրտիչ Երկարակեցեանին և Պարոնայք Եփրեմ Կ. Դաւթեանին, Տիգրան Թ. Աբգարեանցին և Աստուածատուր Ղ. Աղանեանցին, որոնք դպրոցական յարմար դասագրքեր պատրաստելու աշխատասիրութեանը ազգասիրաբար յանձն առնելով, մեծ դիւրութիւն են տուած և դեռ պիտի տան անշուշտ մեր գործին։

Ինչպէս քիչ յառաջ յիշեցինք, դպրոցի եկամուտի մի մասն էլ կազմւել է կամաւոր նուէրներից, որոնք տուել են դպրոցի շահերին, նախանձախնդիր անձինք։ Հոգաբարձութիւնս իւր խորին շնորհակալութիւնը յայտնելով նուիրատու պարոններին, հրատարակում է նրանց անունները, միևնոյն ժամանակ աւելորդ չի համարում դիմումն անել Հայ ծնողներին, որ նոքա յանուն իրանց որդւոց բարոյական և մտաւոր կրթութեան բարեհաճին իւրեանց կամաւոր նուէրներով նպաստել դպրոցի նիւթական բարւոքման գործին, եթէ նոցա համար թանգ է Զուղայի Հայ դպրոցի բարգաւաճումը և մատաղ սերնդի կրթութիւնը։

Մեր անկեղծ շնորհակալութեան ջերմ հաւաստիքը յայտնում ենք այն ամէն յարգելի և ազգասէր անձանց, որոնք ցայս վայր ուղղակի կամ անուղղակի աջակցութիւն են ցոյց տուել մեզ և յետ այսու ևս ցոյց կ'տան ի սէր մեր մատաղ սերնդի կրթութեան սուրբ գործին և մենք մեր կողմից կը խոստանանք ի գործ դնել մեր լաւագոյն ջանքերը, որչափ որ տեղական հանգամանքները թոյլ կտան մեզ այդ անելու, որով արդարացրած լինելով մեր յարգելի հասարակութեան մեզ վերայ դրած յոյսերը, կարողանանք ձեռքերնիս խիղճերիս վերայ դրած ասել թէ՝ «զոր պարտ էաք առնել, արարաք»։

Պատիւ ունիմք մնալ անձնուէր ծառայք ազգիս՝
Տէր Ռէթէոս Դաւթեան
Յ. Տէր Կ. Յորդանանեանց
Մարտիրոս Ս. Յարութիւնեանց
Հ. Տէր Պ. Յակովբջանեանց

Հոգաբարձուք Ազգ. Երկսեռ Ուսումնարանաց Նոր—Զուղայու։

ԾՐԱԳԻՐ

ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆԱՑ ՆՈՐ—ԶՈՒՂԱՅՈՒ

Ծ Ր Ա Գ Ի Ր

ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ

Աւանդուելիք առարկաներ

1) Կրօն, 2) Քրիստոնէական Վարդապետութիւն, 3) Եկեղեցական պատմութիւն, 4) Հայերէն, 5) Պարսկերէն, 6) Ֆրանսերէն, 7) Անգլերէն, 8) Պատմութիւն (Ազգ. Ընդհանուր ազգաց և Հնդկաց), 9) Աշխարհագրութիւն (Բնական, Ուսումնական, Քաղաքական և Հայաստանի), 10)Բնական գիտութիւն (Բնագիտութիւն և Մարդակազմութիւն), 11)Մաթեմաթիքա (Թուաբանութիւն, Գրահաշիւ, Երկրաչափութիւն և Տօմարակալութիւն), 12) Գեղագրութիւն, 13) Գծագրութիւն, 14) Ձայնագրութիւն։

2084-2002

ԿԵԴՐՈՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ

Պատրաստական Դասարան

Կրօն, Մայրենի լեզու (Սկզբնական ծանօթութիւն), Թուաբանութիւն (Հենչելի բանալոր ու գրաւոր հաշուելու խնդիրներ 1—10ը, չորս գործողութեամբ), Զուարճալի պատմութիւններ, Գրութիւն, Մանկական երգեր։

ա. Նախակրթարան

Կրօն (բ. տարի դասատետր կրօնի՝ Սահակ քահանայ Սահակեանցի), Մայրենի լեզու (ա. տարի Մայրենի լեզու), Թուաբանութիւն (Գործնական խնդիրներ և գրել ու կարդալ 1—30ը), Գծագրութիւն (Նկարչութեան ա. տետրակը), Վայելչագրութիւն (Հայերէն)։

Բ. Նախակրթարան

Կրօն (գ. տարի դասատեր կրօնի Սահակ քահանայ Սահակեանցի), Մայրենի լեզու (բ. տարի Մայրենի լեզուն ամբողջ), Անգլերէն (Լանգմանզի ա. և բ. դասատեր), Թուաբանութիւն (Զորս գործողութիւններից զանազան խնդիրներ 1—100 թիւերը), Գծագրութիւն (Նկարչութեան բ. տեսակը), Վայելչագրութիւն (Հայերէն և Անգլիերէն), Հայրենագիտութիւն (Հայրենիքի վերայ մանրամասն տեղեկութիւն), Պատմութիւն (քաղուածք Ազգ. պատմութիւնից)։

Ա. Դասարան

Կրօն (Սրբազան պատմ. հին—ուխտի՝ Սահակ քահանայ Սահակեանցի), Մայրենի լեզու (գ. տարի Մայր. լեզ. ամբողջ), Քերականութիւն (Աշխարհաբար լեզուի քերականութեան ա. մասն. խօսքի կազմութիւն), Անգլերէն (Լանգմանզի մանկական ընթերցարան), Պարսկերէն (Պարսկ. լեզուի սկզբունքը), Թուաբանութիւն (Զորս գործողութիւնները մանրամասնօրէն գործնական խնդիրներով նաև Թուարկութիւն), Պատմութիւն (Հայկազանց հարստութիւն), Աշխարհագրութիւն (Ուսումնական և բնական)։

Բ. Դասարան

Կրօն (Սրբազան պատմութիւն նոր—ուխտի՝ Սահակ քահանայ Սահակեանցի), Մայրենի լեզու (դ. տարի), Քերականութիւն (աշխարհաբար լեզուի քերակ. Բառազնութիւն), Անգլերէն (Լանգմանզի ա. դասագիրք), Պարսկերէն (Պարսկ. ընթերցանութեան ա. գիրք), Թուաբանութիւն (Անուանական թուերով գրաւոր և բանաւոր խնդիրներ, ժամանակի, տեղական կշիռի և Պարսկաստանի բոլոր դրամների և երկայնութեանց չափերը), Պատմութիւն (Հայկազանց և Արշակունեաց հարստութիւններ), Աշխարհագրութիւն (Շարունակութիւն Բնական մասի և Հայաստանի աշխարհագրութիւն)։

Գ. Դասարան

Կրօն (Գործք առաքելոց), Մայրենի լեզու (Ընդհանուր ազգաց պատմութիւն), Քերականութիւն (Աշխարհաբար քերականութիւն կրկնութեամբ և մանրամասնօրէն), Անգլերէն (Լանգմանզի բ. դասագիրք), Պարսկերէն (Պարսկ. բ. դասագիրք), Թուաբանութիւն (Հասարակ կոտորակներով չորս գործողութեան վերաբերեալ խնդիրներ), Պատմութիւն (Հայոց պատմ. Բագրատունեաց հարստ.), Աշխարհագրութիւն (Եւրոպայի քաղաքական աշխարհագրութիւն)։

Դ. Դասարան

Կրօն (Եկեղեցական Պատմութիւն), Հայերէն (Ընտիր հատուածներ), Քերականութիւն (Գրաբար քերակ. ա. մասն), Անգլերէն (Լանգմանզի գ. դասագիրք), Անգլերէն տերակ. (Համառօտ քերականութիւն), Պարսկերէն (Սադ Հէքայաթ՝ դասագիրք), Թուաբանութիւն (ամբողջ տասնորդական կոտորակներ և քառակուսի խորանարդ արմատներ), Աշխ. Պատմութիւն (ամբողջապէս), Աշխարհագրութիւն (Եւրոպա և Ասիա), Բնագիտութիւն (Տարրական մասը)։

Ե. Դասարան

Կրօն (Եկեղեցական պատմութիւն ամբողջապէս), Հայերէն (Եղիշէ), Քերականութիւն (Գրաբար բ. մասն Համաձայնութիւն), Անգլերէն (Լանգմանզի դ. դասագիրք և Անգլ. քերակ. համառօտ), Պարսկերէն (Դելփասանդ դասագիրք), Ֆրանսերէն (Ֆրանս. լեզուի սկզբունք Այբբենարանների վերայ «1899—1900»), Թուաբանութիւն (Դրամափոխութեան գործողութիւններ, երից կանոններ, պարզ և բարդ տոկոսների կանոնները), Աշխարհագրութիւն (Զորս գործողութիւններ, մեծագոյն հասարակ բաժանարարն և փոքրագոյն հասարակ բազմապատիկը), Երկրաչափութիւն (սկսել ա. գիրք), Պատմութիւն (Ընդհանուր ազգաց), Աշխարհագրութիւն (Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա), Մարդաչափութիւն։

գ. Դասարան

Կրօն (Քրիստոնէական վարդապետութիւն), Հայերէն (Եղիշէ և գրաբար Քերականութիւն ամբողջապէս), Անգլիերէն (Բուկ աւ վորդիս գասագիրք, Քերականութիւն ամբողջապէս և ձեռնարկ Բանաստեղծական կտորներ Պալգրէյվս ստուգէնտս լայրիքսից. սկսել նաև Հինտս ան դը սըդի աֆ ինգլիշ գրամըր գիրքը), Թուրքերէն (Սելամէ մօհսէնի գիրքը), Ֆրանսերէն (սկսել 1900—ից), Թուաբանութիւն (ամբողջ), Պատմութիւն (Ընդհանուր ազգաց ամբողջ), Ալճէբրա (մինչև գ. հաւասարութեան վերջ), Երկրաչափութիւն (ա. և բ. գրքերը), Աշխարհագրութիւն (Աուտլայնզ ջիագրաֆի ամբողջ), Պատմութիւն Հնդկաստանի (սկսել Անգլիերէն լեզուով), Առողջապահութիւն։

Ծանօթութիւն

Ուսումնական Վարչութիւնը մտադիր է եկող ուսումնական տարւանից բաց անել Դ. Դասարան, որտեղ աւանդուելու են լեզուներ և գիտութիւններ իրանց բոլոր ճիւղերով։

ՕՐԻՈՐԴԱՑ Ս. ԿԱՏԱՐԻՆԵԱՆ ԴՊՐՈՑ

Պատրաստական Դասարան

Կրօն, Մայրենի լեզու (Սկզբնական ծանօթութիւն), Թուաբանութիւն (Հենչելի բանաւոր ու գրաւոր հաշուելու խնդիրներ 1—10ը, չորս գործողութեամբ), Զուարճալի պատմութիւններ, Գրչութիւն, Մանկական երգեր։

ա. Նախակրթարան

Կրօն (բ. տարի դասատետր կրօնի՝ Սահակ քահանայ Սահակեանցի), Մայրենի լեզու (ա. տարի Մայրենի լեզու), Թուաբանութիւն (Գործնական խնդիրներ և գրել ու կարդալ 1—30ը), Գծագրութիւն (Նկարչութեան ա. տետրակը), Գեղեցկագրութիւն (Հայերէն)։

բ. Նախակրթարան

Կրօն (գ. տարի դասատետր կրօնի Սահակ քահանայ Սահակեանցի), Մայրենի լեզու (բ. տարի Մայրենի լեզուն ամբողջ), Անգլիերէն (Լանգմանգի ա. և բ. դասատետր), Թուաբանութիւն (Չորս գործողութիւններից զանազան խնդիրներ 1—100 թւերը), Գծագրութիւն (Նկարչութեան բ. տետրակը), Գեղեցկագրութիւն (Հայերէն և Անգլիերէն), Հայրենագիտութիւն (Հայրենիքի վերայ մանրամասն տեղեկութիւն), Պատմութիւն (քաղուածք Ազգ. պատմութիւնից)։

ա. Դասարան

Կրօն (Սրբազան պատմ. հին—ուխտի՝ Սահակ քահանայ Սահակեանցի), Մայրենի լեզու (գ. տարի Մայր. լեզ. ամբողջ), Քերականութիւն (Աշխարհաբար լեզուի քերականութեան ա. մասն. խօսքի կազմութիւն), Անգլիերէն (Լանգմանգի մանկական ընթերցարան), Թուաբանութիւն (Չորս

գործողութիւնները մանրամասնօրէն գործնական խնդիրներով. Նաև Թըուարկութիւն), Պատմութիւն (Հայկազանց հարստութիւն), Աշխարհագրութիւն (Ուսումնական և բնական)։

բ. Դասարան

Կրօն (Սրբազան պատմութիւն նոր—ուխտի՝ Սահակ քահանայ Սահակեանցի), Մայրենի լեզու (գ. տարի), Քերականութիւն (աշխարհաբար լեզուի քերակ. Բառագննութիւն), Անգլիերէն (Լանգմանցի ա. դասագիրք), Թուաբանութիւն (Անուանական թուերով գրաւոր և բանաւոր խնդիրներ, ժամանակի, տեղական կշիռի և Պարսկաստանի բոլոր դրամների և երկայնութեանց չափերը), Պատմութիւն (Հայկազանց և Արշակունեաց հարստութիւններ), Աշխարհագրութիւն (Տարունակութիւն Բնական մասի և Հայաստանի աշխարհագրութիւն)։

գ. Դասարան

Կրօն (Գործք առաքելոց), Մայրենի լեզու (Ընդհանուր ազգաց պատմութիւն), Քերականութիւն (Աշխարհաբար քերականութիւն կրկնութեամբ և մանրամասնօրէն), Անգլիերէն (Լանգմանցի բ. դասագիրք), Թուաբանութիւն (Հասարակ կոտորակներով չորս գործողութեան վերաբերեալ խնդիրներ), Պատմութիւն (Հայոց պատմ. Բագրատունեաց հարստ.), Աշխարհագրութիւն (Եւրոպայի քաղաքական աշխարհագրութիւն)։

դ. Դասարան

Կրօն (Եկեղեցական Պատմութիւն), Հայերէն (Ընտիր հատուածներ), Քերականութիւն (Գրաբար քերակ. ա. մասն), Անգլիերէն (Լանգմանցի գ. դասագիրք), Անգլիերէն քերակ. (Համառօտ քերականութիւն), Թուաբանութիւն (ամբողջ, տասնորդական կոտորակներ և քառակուսի խորանարդ արմատներ), Անգ. Պատմութիւն (ամբողջապէս), Աշխարհագրութիւն (Եւրոպա և Ասիա), Բնագիտութիւն (Տարրական մասը)։

ե. Դասարան

Կրօն (Եկեղեցական պատմութիւն ամբողջապէս), Հայերէն (Եղիշէ), Քերականութիւն (Գրաբար բ. մասն. Համաձայնութիւն), Անգլիերէն (Լանգմանցի դ. դասագիրք և Անգլ. քերակ. համառօտ), Թուաբանութիւն (Դրամափոխութեան գործողութիւններ, երից կանոններ, պարզ և բարդ տոկոսների կանոնները), Պատմութիւն (Ընդհանուր ազգաց), Աշխարհագրութիւն (Աֆրիկա, Ամերիկա և Աւստրալիա), Մարմնամարզութիւն։

զ. Դասարան

Կրօն (Քրիստոնէական վարդապետութիւն) Հայերէն (Եղիշէ և գրաբար Քերականութիւն ամբողջապէս), Անգլիերէն (Լանգմանցի ե. դասագիրք և Անգլ. Քերակ. համառօտ), Թուաբանութիւն (ամբողջ), Պատմութիւն (Ընդհանուր ազգաց ամբողջ), Առողջապահութիւն ։

ԿԱՆՈՆՆԵՐ

1.) Ծնողները պարտաւոր են շաբաթուայ վեց օրերում անխափան ուսումնարան ուղարկել իրենց զաւակներին, բացի դպրոցական տօներից։

ԲԱՑԻ ԿԻՐԱԿԻՆԵՐԻՑ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ

1.	Յունուար ամսի 1—15 Ծննդեան տօների առթիւ ձմեռնային արձակուրդ	12	Օր
2.	Փետրուար ամսի 14 ին Տեառնընդառաջի տօն	1	,,
3.	Ս. Ղևոնդեանց տօն	1	,,
4.	Ս. Վարդանանց տօնի օրից մինչև Մեծ պահոց Բշ. օրը	4	,,
5.	Մարտ 30 ին. օր հիմնարկութեան Կեդր. Ուսումնարանի	1	,,
6.	Ապրիլ 7 ին. Աւետման օրը	1	,,
7.	Աւագ Բշ. ից մինչև զատկի շբ. ից յետոյ	12	,,
8.	Համբարձման տօնի օրը	1	,,
9.	Ս. Գրիգոր Լուսաւորչի «Ելն ի վիրապէն և Գիւտի նշխարացն»	2	,,
10.	Ս. Թարգմանչացն «Սահակայ և Մեսրովպայ»	1	,,
11.	Ամառնային արձակուրդ Յուլիս ամիսը ամբողջ	27	,,
12.	Տօն Նողակաթի Ս. Էջմիածնի	1	,,
13.	Վերափոխման Բշ. օրը «Մեռելոց»	1	,,
14.	Տօն Ծննդեան Ս. Աստուածածնի	1	,,
15.	Խաչվերացի Բշ. օրը «Մեռելոց»	1	,,
16.	Ս. Ամենափրկչեան Վանուց, Ս. Գէորգայ, Ս. Մինասի, Ս. Ստեփաննոսի, Ս. Ներսէսի, Ս. Նիկողայոսի, Ս. Յակովբայ, Ս. Սարգսի և Ս. Կատարինեայ տօներին (*)	9	,,
17.	Դեկտ. 9 ին տօն յղութեան Ս. Աստուածածնի ի յԱննայէ	1	,,
18.	Տօն Աբգարու թագաւորին Հայոց	1	,,
19.	Տարեդարձ ծնունդ. Վեհ. Շահին Պարսից	1	,,
20.	Թեմական Ս. Առաջնորդին նուիրուած	1	,,
	Տարեկան	80	,,

(*) Ծանօթութիւն

Նոր—Զուղայի համար թէ՛ Եկեղեցի և թէ Ուխտատեղիներ են սրանք։

2.) Նոր ընդունուող աշակերտի ծնողները պարտաւոր են նախապէս խնդրագրով դիմել Տեսչին, ցոյց տալով իրենց որդու հարկաւոր վկայագրերը, որից յետոյ յանձնարարուում է կարգապահ ուսուցչին տնօրինել արժանը։

3.) Ուսումնական տարեշրջանը տեղական հանգամանքների պատճառով սկսւում է Օգոստոս ամսի 1 ից։

4.) Ուսումնարանները կ'ունենան երկու վեցամսեայ քննութիւններ. ա. ը Դեկտեմբերի վերջին քառորդում, որին կը հետևի ծննդեան արձակուրդը, և բ. ը Յունիսի վերջին քառորդում, որին կը հետևի ամառնային արձակուրդը։

5.) Տեղական եղանակի համաձայն՝ Յունիս ամսին ուսումնարանների դասերը սկսւում են առաւօտեան 6½ ժամին և տևում մինչև 12 ժամը։ Միայն Յունիսին Կեդրոնական դպրոցի աշակերտները ժամի 3 ին կէսօրից յետոյ դարձեալ պիտի վերադառնան ուսումնարան յաջորդ օրուայ դասերի սերտողութեան համար մինչև երեկոյեան 5½ ժամին ընդ հսկողութեամբ կարգապահ ուսուցչի, որից յետոյ դարձեալ ուսուցչական խմբի առաջնորդութեամբ պէտք է տարուին զբօսնելու շաբաթը 2 անգամ։

6.) Տարուայ մնացեալ ամիսներն առաւօտեան 7 ժամից մինչև 8½ը և երեկոյեան 3½—4½ ը սերտողութիւն է լինելու ընդ հսկողութեամբ կարգապահ ուսուցչի։

7.) Կիւրակէ օրերը ծնողները պէտք է հարկադրեն իրենց զաւակներին յաճախել Ս. Ամենափրկչեան Վանուց տաճարում աղօթելու ուսուցչաց խմբի ներկայութեամբ։

8.) Ծնողներից պահանջւում է իրենց զաւակաց ամսական յառաջադիմութեան ցիշատակարանները ստորագրելու և իրենց որդւոց կրթութեամբ հետաքրքրուելու։

9.) Ծնողք պարտաւոր են ստիպել իրենց որդիներին տանը սերտողութիւն անել։

10.) Դասերը չսովորող աշակերտները ճաշից յետոյ մնում են դպրոցում հերթապահ ուսուցչի հսկողութեամբ դասերը սովորելու համար։(*)

11.) Աշակերտների հագուստները պէտք է ըստ կարի մաքուր լինին՝ թէև աղքատիկ և հին ցնցոտիներ լինին նրանք։

12.) Ծնողաց կողմից բոլոր դիմումները պէտք է լինին գրաւոր տեսչին ուղղեալ։

(*) Ծանօթութիւն

Դասերից յետոյ մնացող աշակերտներին դպրոցում այն յարմարութիւններ տրուում է։

ՆՈՐ—ՋՈՒՂԱՅԻ ԱԶԳԱՅԻՆ ԵՐԿՍԵՌ ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆՆԵՐԻ ՏԱՐԵԿԱՆ ՆՈՒԻՐԱՏՈՒՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ

		ղռ.
1.	Գեր. Մաղաքիա Եպիսկոպոս Տէրունեան Վիճ. Ս. Ա. ռաջնորդ	200—
2.	Արժ. Խաչ. Տէր Մարտիրոս Աւագ քհնյ. Տէր Յովակիմեան	100—
3.	,, Տէր Ռէթէոս Դաւթեան	20—
4.	,, Տէր Մկրտիչ Պետրոսեան	15—
5.	,, Տէր Եսայի Տէր Ս. Յովհաննսեան . . .	120—
6.	,, Տէր Բարսեղ Պ. Ալէքսանեան . . .	15—
7.	Պարոն Սէթ Ե. Յ. Եսայեանց	100—
8.	,, Մ. Ս. Պ. Աղանուրեանց	50—
9.	,, Գ. Տէր Յովակիմեան	50—
10.	,, Մարտիրոս Ս. Տ. Ոսկանեանց (Պոնդոէի պարէկ. Լարչի էֆոն)	190—
11.	Տիկին Թագուհի Ս. Տէր Ոսկանեանց . . .	100—
12.	Պարոն Մ. Թ. Մարգարեանց	50—
13.	,, Պ. Կ. Պօղոսեան	50—
14.	Տիկին Մարթա Պօղոսեան	50—
15.	,, Ծաղիկ Ն. Տէր Գ. Ն. Տէր Յարութիւնեանց .	30—
16.	Պարոն Ներսէս Տէր Գ. Ն. Տէր Յարութիւնեանց .	20—
17.	Տիկին Վարդուհի Խաչիկ Յովսէփեան . . .	50—
18.	,, Սանդուխտ Գէորգ Ղուկասեանց . . .	50—
19.	,, Վարդխաթուն Յարութիւնեան . . .	20—
20.	,, Մէրխաթուն Յ. Հ. Կրէտ	30—
21.	Պարոն Մանուկ Բարսեղեան և որդիք իւր . .	60—
22.	,, Մինաս Տէր Դ. Ս. Նահապետեան . .	30—
23.	,, Յ. Տէր Կ. Յորդանանեանց	30—
24.	,, Մարտիրոս Ս. Յարութիւնեանց . . .	30—
25.	,, Հ. Տէր Պ. Յակովբջանեանց . . .	30—
26.	Պարոնայք Սէթ և Մինաս Ս. Յովհաննսեանց .	30—
27.	Պարոն Եղիազար Ա. Յովհաննէս	20—
28.	,, Մկրտիչ Ս. Յարութիւնեանց . . .	25—
29.	,, Յ. Մէկէնթէր	60—
30.	,, Կարապետ Յ. Զէյթունեան	50—
31.	Տիկին Խաչխաթուն Ն. Կրէտ	10—
	Փոխադրեալ	1,685—

	Փոխադրեալ	1,685—
32.	Պարոն Յ. Դիմիտրեան	50—
33.	,, Կիւրեղ Յ. Տէր Կիւրեղ Թ. Տէր Յովհաննեանց	30—
34.	,, Մարգար Կ. Տէր Յ. Գալստանեան . .	30—
35.	Տիկին Մարիամ Մէգան	20—
36.	,, Մարիամ Մ. Յ. Տէր Օհանեանց . . .	10—
37.	Պարոն Կ. Ս. Նահապետ	20—
38.	Պարոնայք Եղբարք Աղանեանք	10—
39.	Պարոն Յարութիւն Տէր Գրիգորեան . . .	6—
40.	,, Յարութիւն Եդգարեան	30—
41.	,, Խուդադ Եղիազար Քիխա Մկրտիչ . .	10—
42.	,, Եավար Մկրտումեան	10—
43.	,, Կարապետ Պ. Թադէոսեանց . . .	10—
44.	Տիրուհի Մարիամխանում Տէր Ա. Գ. Աբգարեան .	10—
45.	Պարոն Թադդէոս Ն. Տէր Գալստանեանց . .	12—
46.	,, Թադդէոս Ս. Աբգարեանց	20—
47.	,, Ե. Ա. Դաւթեան	20—
48.	Տիկին Կատարինէ Ա. Խաչակեան	10—
49.	Պարոն Սիմէօն Մ. Յովհաննսեան	10—
50.	,, Կարապետ Թարվէրդեան	10—
51.	,, Յորդանան Մարգարեան	5—
52.	,, Յորդանան Մ. Մկրտումեան	30—
	Համագումար	2,048—

2013

2013
թ.

200